

Հ Ր Ա Մ Ա Ն N 339-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«13» ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՆՈՏԱՐ ԱՏՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի հուլիսի 10-ի N ԵՆՊ-418/18 գրությունը և «Երևան» նոտարական տարածքի նոտար Ն. Սարգսյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. 2018 թվականի հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 22-ը ներառյալ «Երևան» նոտարական տարածքի, նստավայր՝ «Կենտրոն 1» նոտար Նունե Սարգսյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Երևան» նոտարական տարածքի, նստավայր՝ «Կենտրոն 1» նոտար Ատոմ Հայրապետյանին:

Ժամանակավոր պաշտոնակատար՝



ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ